

բուեւու միանձնական կենաց¹ (Դաւր. 249—251) :

Իր մտադրութիւնը կը լսուի Տրապիզոն. եւ տէր Կիրակոս, որ նոր էր յանձնած զերեզմանի իւր նորահարս իրիցկինը, կ'ուզեւորի Սաղմոսավանք, Սարգիս եպիսկոպոսի հետ միախորհուրդ՝ ապրելու առանձնակեաց կեանք: Չգտնելով հոն իւր խնդրելին՝ կը վերադառնայ Տրապիզոն, կը վաճառէ չարժական իրերը. արժէքին մէկ մասը կը վերապահէ ճանապարհորդութեան, մնացածը կը բաշխէ աղքատներուն. իսկ տունն եւ անդատանները կը նուիրէ եկեղեցւոյ եւ ինքը ճանապարհ կ'իյնայ դէպի Ս. Երկիր: Կը պատահի հոն Սարգիս եպիսկոպոսի. կը խորհրդակցին ի միասին եւ «միախորհելու եւ միաբան եւ միախորհուրդ եղեալ յայնմ օրէ եւ առ յապա» կ'որոշեն «կենցաղավարիլ ի միասին»²: 1606 Յունիս 15ին Երուսաղէմ կը հանդիպի իրենց Գրիգոր Դարանաղցի. որ իւր Աստուածաշունչի մէջ կ'արձանագրէ տողերս, յայտարարելով թէ զբուեցաւ Երուսաղէմ, երբ

¹ Բրիտանական Թանգարանի Թ. 87 հայերէն ձեռագիրը (Conybeare, Catalogue, p. 208—209) հետեւեալ յիշատակադրութիւնն ունի, զժրախտարար առանց թուականի. «Եւ Սարգիս եպիսկոպոս Սաղմոսավանից եկա՛ր յԵրուսաղէմ եւ զՀարանց վարք զնեցի ի հալալ արդեանց իմոց, եւ ետու յիշատակ ի դուռն Սաղմոսավանիցն... յիշեալիք զՍարգիս եպիսկոպոսն եւ զԾնողսն իւր»:

² Այսպէս Առաքել Դաւրիթեցւոյ (250—251) համաձայն: Գր. Դարանաղցի եւ Գր. Կեսարացի զԿիրակոս Պետրոս Կարկառեցւոյ աչակերտը կը ճանչնան. տե՛ս այս մասին էջ 369—373: